

## Հեքիաթի ազգային առանձնահատկությունների թարգմանության որոշ խնդիրների շուրջ

Հ. Գ. Բաղդասարյան

Երևանի պետական համալսարանի ռոմանական բանասիրության ամբիոն, Երևան, Հայաստան  
Corresponding author. E-mail: h.baghdasaryan@ysu.am

Paper received 23.03.17; Accepted for publication 28.03.17.

**Ամփոփագիր:** Հեքիաթը տվյալ ժողովրդի աշխարհընկալման կաղապարման ուրույն ձև է, որի թարգմանության ժամանակ առանձնահատուկ կարևորվում է լեզվամշակութային տարրերի համարժեքության խնդիրը: Մույն հոդվածում քննվում են հեքիաթի ոճապատկերային համակարգի, ավանդական բանաձևերի և իրակությունների թարգմանության որոշ խնդիրներ՝ հայ մեծ գրող Հ. Թումանյանի հեքիաթների իսպաներեն և իտալերեն թարգմանությունների հիման վրա: Հեքիաթի ազգային առանձնահատկությունների թարգմանության ժամանակ կարևոր նշանակություն ունի գործաբանական հարմարեցման խնդիրը, որը պայմանավորված է տվյալ ասույթի հաղորդակցական-գործառական արժեքով, լեզվական և արտալեզվական տարբեր գործոններով, թարգմանող և թարգմանվող լեզուները կրող ժողովուրդների լեզվատառնությունների առանձնահատկություններով:

**Բանալի բառեր.** *հեքիաթ, ազգամշակութային բաղադրիչ, թարգմանություն, գործաբանական հարմարեցում, լեզվական և արտալեզվական գործոններ*

Ամեն մի ժողովրդի հեքիաթների մեծ մասը խորապես ազգային ստեղծագործություններ են, որոնք տարբերվում են այլ ժողովուրդների հեքիաթներից ոչ միայն կյանքի, կենցաղի, բնության նկարագրությամբ, հերոսների հոգեկան կերտվածքով, այլ նաև լեզվաոճական հնարներով, պատկերային ուրույն համակարգով, որոնք առանձնահատուկ դժվարություն են ստեղծում թարգմանության գործընթացում:

Թարգմանության մեջ հեքիաթի ազգագրական երանգավորման վերարտադրումը դժվարին խնդիր է: Միայն հարուստ հանրագիտական տեղեկությունների ու գիտելիքների առկայության դեպքում թարգմանիչը կարող է ներթափանցել հեքիաթային ստեղծագործության ազգագրական հենքի մեջ, ճիշտ ըմբռնել բարոյախրատական արժեքների ազգային բնույթը, գործող անձանց հարաբերությունները և հաղորդել թարգմանության մեջ:

Տարբեր ժողովուրդների մտածողության, այդ թվում նաև զուգորդական մտածողության, աշխարհընկալման յուրօրինակությունները մի առանձնահատուկ դժվարություն են ստեղծում հեքիաթի թարգմանության ժամանակ: Թարգմանության ընթացքում կարևորվում է լեզվի արտահայտչական անսպառ հնարավորությունները ստեղծագործաբար օգտագործելու թարգմանչի հմտությունը, պայքարը բառացի թարգմանությունների դեմ, որոնք աղավաղում են թարգմանության լեզուն, գեղարվեստական պատկերները, ինչպես նաև հեքիաթում արտացոլված իրականությունը:

Հեքիաթի ուրույն պատկերների թարգմանության ժամանակ հաճախ մեծ դեր են խաղում պատկերի հնչյունական ձևի խորհրդանշանական իմաստը, նրա բաղադրիչների զուգորդային-հարանշանակային կապերը, պատկերների միջտեքստային և ներտեքստային համակարգային փոխակերպումները, ինչպես նաև հեքիաթը ընթերցողի ճանաչողական-մշակութային փորձը,

որն ապահովում է պատկերի համարժեք ընկալումը: Ներլեզվական որոշ գործոններ նույնպես խնդիրներ են առաջադրում հեքիաթի պատկերների թարգմանության ժամանակ: Այսպես, օրինակ, Հ. Թումանյանի «Տերն ու ծառան» հեքիաթի հետևյալ նախադասության իսպաներեն և իտալերեն թարգմանություններում պատկերը վերափոխվել է և թարգմանվել *Արևը մայր է մտել, բայց տե՛ս, նրա քույրը՝ լուսինը, դուրս է եկել՝ նշված ռոմանական լեզուներում գոյականի քերականական սեռի առկայության պատճառով: Համեմատենք. Արևը մեր մտավ, բայց տե՛ս, նրա ախպեր լուսնյակը դուրս եկավ [էջ 198]; իտ. El sol se ha puesto, pero mira, su **hermanita, la luna** ha salido [p. 30]; իս. Il sole è tramontato ma vedi che è uscita la sua **sorella luna** [p. 75]: Հեքիաթի ազգային երանգավորման էական մասն է կազմում նկարագրվող իրադրության տարրերի յուրօրինակ ընտրությունը, ընդ որում, իրադրության որոշ տարրեր լեզվական համայնքի կողմից առանձնացվում են որպես խորհրդանշաններ: Լեզվամշակութային համայնքներում այդ խորհրդանշանների ընտրության ժամանակ ստեղծվում են տարբեր ավանդույթներ, որը և պետք է հաշվի առնի թարգմանիչը: Որևէ բառի հուզական և խորհրդանշանային հատուկ արժեքը ստեղծվում է համապատասխան առարկայի կամ երևույթի ունեցած սոցիալական կարևոր դերի հիման վրա: Խորհրդանշանայնության (սիմվոլիկայի) արմատները պետք է փնտրել շրջապատող իրականության, բնության, տվյալ ժողովրդի կյանքի առանձնահատկությունների, սովորույթների ու ավանդույթների մեջ: Հայ հին վիպաշխարհում արևի և լուսնի մասին ներկայացվում են տարբեր պատկերացումներ. մի դեպքում արևը տղա է, լուսինը՝ աղջիկ, որոնք թագավոր ու թագուհի են, կամ էլ սիրահար զույգ: Իսկ մեծ մասամբ նրանք քույր ու եղբայր են, ընդ որում, արևը քույրն է, լուսինը՝ եղբայրը [3, էջ 16], ինչպես Հ. Թումանյանի «Տերն ու ծառան»*

հեքիաթում: Սակայն քանի որ վերոհիշյալ ռոմանական լեզուներում լուսինը իգական սեռի գոյական է, արևը՝ արական, պատկերն անխուսափելիորեն վերափոխվում է թարգմանության մեջ:

Գեղարվեստական թարգմանությունը վեր է հանում թարգմանվող և թարգմանող լեզուների մշակույթներում առկա նմանություններն ու տարբերությունները: Հեքիաթի թարգմանության ժամանակ բարդ խնդիրներ չեն առաջանում, երբ տեղեկատվությունը համամարդկային բնույթ է կրում (օրինակ, նմանատիպ իրադրություններ, հեքիաթային նույնատիպ սյուժեներ, կերպարներ), սակայն երբ խոսվում է ազգային նշոյթավորվածությունն ունեցող իրողությունների մասին, թարգմանիչը հարկադրված է հաղորդել լրացուցիչ տեղեկատվություն, որը բնօրինակում մտնում է կանխենթադրման ծավալի մեջ և կազմում է ասույթի «ազգամշակութային» ենթատեքստը: Բնօրինակի և թարգմանության ընթերցողների տեղեկատվության ծավալում եղած տարբերությունները թարգմանչին հարկադրում են ներմուծել լրացուցիչ տեղեկություններ՝ բացատրություններ, ծանոթագրություններ, որոնք ավելացնում են տեքստի ծավալը, բարդացնում հեքիաթի պարզ հյուսվածքը և դժվարեցնում տեքստի ընկալումը: Հաշվի առնելով տեղեկատվության գործաբանական-հաղորդակցական կարևորությունը՝ նման դեպքերում կարելի է դիմել թարգմանական տարբեր հնարների: Քննենք մի օրինակ «Բարեկենդանը» հեքիաթից, որտեղ ազգային երանգավորում ունեցող *քելեխ* բառը թարգմանվել է նկարագրական հնարով. ...էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել. հորդ **քելեխն** ես տալիս, թե՛ տղիդ հարսանիքն ես անում [էջ 218]; *խսյ. ¿por qué has comprado de una vez tanta manteca y arroz? ¿eh? ¿quizás sea para la comida de exequias de tu padre o la boda de tu hijo?* [p. 2]; *խս. A cosa serve tutto questo riso e grasso che hai portato a casa? Che ne devi fare, il convivio funebre di tuo padre o la festa nuziale di tuo figlio?* [p. 40]:

Հեքիաթի թարգմանության ժամանակ առանձնահատուկ դժվարություն են ստեղծում ազգագրական, հասարակական-քաղաքական և այլ իրակությունները, դրամի և չափի միավորները: *Քելեխ* բառը հայերենում նշանակում է «նոր թաղված ննջեցյալի հիշատակին տրված ճաշկերույթ, հոգեհաց», որը գրեթե ընդունված չէ եվրոպական երկրներում: Իսպաներենում և իտալերենում տառադարձելու դեպքում այն տարաշխարհիկ երանգ է ստանում և իր վրա մեծ ուշադրություն բևեռում, իսկ այլ հնարներով թարգմանելիս կորցնում է իր ազգային երանգավորումը, հետևաբար և նման իրակությունները պետք է տառադարձել, երբ նրանք բնօրինակում իմաստային կամ հուզական մեծ ծանրաբեռնվածություն են կրում:

Հ. Թումանյանի հեքիաթները թարգմանելիս դժվար է հաղորդել դրամի միավորներում

արտահայտված ոճական-հուզական, ինչպես նաև ժամանակային նրբերանգներն ու տարբերությունները: Դրամի որոշ միավորներ տարբեր պատճառներով (մեծ մասամբ՝ պատմական) կորցրել են իրենց ստույգ «արժեքային» իմաստը, կոնկրետությունը, վառ արտահայտված ազգային գունավորումը և հաճախ օգտագործվում են փոխարեքական իմաստով: Եթե դրամի միավորները օգտագործվել են ընթերցողի մոտ քանակային որոշ պատկերացում ստեղծելու նպատակով, ապա դրանք սովորաբար թարգմանվում են վառ ազգային գունավորում չունեցող գործառական համաբանություններով կամ էլ չեզոք, նկարագրական միջոցներով, օրինակ՝ սեռանիշ բառերով (փող, դրամ): Իմաստի լայն ընդհանրացման դեպքում այդ իրակությունները թարգմանվում են *քիչ, շատ* և նման այլ բառերով: Համեմատենք հետևյալ օրինակները Հ. Թումանյանի «Տերն ու ծառան» հեքիաթից. Ասում է. «Մինչև էն ժամանակը թե դու բարկանաս, դու **հազար մանեթի տուգանք** տաս ինձ, թե ես բարկանամ, ես տամ» [էջ 197]; *խսյ. Dice: “Cuando llegue el tiempo de que tú te enfades, me darás cien reales de multa, y si me enfado yo, te los daré yo”* [p. 29] կամ “Vas a trabajar hasta que llegue el momento en que tú te enfades y, entonces, me darás una **multa de cien monedas de oro**. Pero si me enfado, te las daré yo”.

Հեքիաթի տեքստում չափի միավորները նույնպես ոչ այնքան ստույգ տեղեկություններ են հաղորդում, որքան ընթերցողի երևակայության մեջ տեսանելի պատկերացում ստեղծում որևէ երևույթի վերաբերյալ: Այդ պատճառով նպատակահարմար է չափի միավորները (իրակությունները) թարգմանել գործառական համաբանություններով կամ էլ նկարագրական միջոցներով, ինչպես հետևյալ օրինակում «Բարեկենդանը» հեքիաթից. Մի օր էլ մարդը **մի քանի փուր եղ ու բրինձ է** առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն [էջ 218]; *խսյ. Un día el hombre compra unos cuantos sacos de arroz y manteca, se lo echa a las espaldas de un mozo y lo manda a casa* [p. 1]; *խս. Un giorno capitò che il marito comprò grasso e riso a bizzeffe, li caricò sulle spalle del bracciante e portò le provviste a casa* [p. 40].

Իսկ ահա հետևյալ օրինակում *կոտր* պատմաբառ է, որն ըստ *Արդի հայերենի բացատրական բառարանի* նշանակում է «փայտե աման, որ իբրև չափ էր ծառայում հացահատիկի համար» [1]: Երկու լեզուներում էլ *մի կոտ ոսկին* թարգմանվել է գործառական համաբանությամբ: Հարկ է նաև նշել, որ *una alforja llena de monedillas de oro* արտահայտությունը շատ գործածական է իսպանական ժողովրդական հեքիաթներում.

— Ինձ **մի կոտ ոսկի** ես պարտ, եկել եմ տանեմ:

— **Մի կոտ ոսկի**՝ — գարմանում է թագավորը: — Սո՛ւտ ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտ [էջ 219]: (Սուտասանը)

— Tú me debes **una alforja llena de monedas de oro**, he venido a llevármelo.

—¿Una alforja llena de oro? —se sorprende el rey—. Mientes, yo no te debo ningún oro. [p. 38]

“Mi dovete **uno stao pieno d’oro**, sono venuto per riprenderlo”.

“**Uno stao pieno d’oro?**”, si stupì il re. “È una bugia, non ti devo proprio niente!” [p. 85-86]

Վերոհիշյալ օրինակում, ինչպես նաև փոխաբերության, համեմատության կամ էլ դարձվածային միավորի կազմում չափի միավորները հանդես են գալիս որպես վերահամաստավորված բառեր, որոնք սովորաբար հաղորդվում են չեզոք, նկարագրական միջոցներով: Չափի և դրամի միավորները պետք է փոխարինել համարժեք բառերով մեծ վարպետությամբ՝ հեքիաթի ազգային երանգավորումը պահպանելու նպատակով:

Տարբեր ժողովուրդների խոսքային ավանդույթները վառ արտահայտված ազգային գունավորում ունեն: Խոսքային ամեն մի իրադրություն «սպասարկվում» է պատրաստի բանաձևերով, որոնք տվյալ ժամանակաշրջանում ընդունվել և գործածվում են տվյալ լեզվական համայնքի խոսքային գործունեության մեջ: Իրագործելով լեզվի հիմնական գործառույթը՝ հաղորդակցությունը, խոսքի բանաձևերը կատարում են մի շարք այլ գործառույթներ, ինչպես, օրինակ, հաղորդման հասցեատիրոջ կամ ընդունողի ուշադրությունը գրավելը (կոչական կամ դիմողական գործառույթ), խոսքարկման կամ կապահաստատական գործառույթ, հասցեատիրոջ նկատմամբ վարքաձևային/ոչ վարքաձևային կողմնորոշում, սոցիալական-կարգավորիչ և ոճական գործառույթ [6, էջ 27]: Այս առումով Հ. Թումանյանի հեքիաթների թարգմանության խնդիրներից է իրադրային մի շարք կլիշեների, այդ թվում նաև անեծքի քարացած ձևերի համարժեք վերարտադրությունը: Համեմատենք հետևյալ օրինակները «Բարեկենդանը» հեքիաթից. «Վա՛յ քու անխելք տունը քանդվի, որ ասում եմ հիմար ես, հիմար ես էլի ... [էջ 219]; *խսյ.* —¡Mal haya! ¡Que se te parta un rayo! Cuando digo que eres una tonta, tonta eres... [p. 5]; *խս.* *Accidentaccio... Che ti venga un colpo! Vedi che sei proprio stupida...?* [p. 42]: Համեմատենք նաև հետևյալ օրինակները «Տերն ու ծառան» հեքիաթից. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ [էջ 200]; *խսյ.* *pobre de él quien se enfade* [p. 31]; սև լինի քու պատահելու օրը, էս ինչ փորձանք էր, որ էս ընկա մեջը... [էջ 201]; *խսյ.* ¡Maldito sea el día que apareciste! ¡Vaya desgracia en la que he caído...! [p. 32]:

Անեծքի վերոհիշյալ քարացած արտահայտությունները՝ իրադրային կաղապարները, թարգմանվել են ամբողջական փոխակերպման հնարով: Սա այն թարգմանական հնարն է, երբ բնագրի լեզվական միավորը թարգմանության լեզվում վերարտադրվում է ոչ թե տարբ առ տարբ, այլ ամբողջությամբ և «ելակետային լեզվի և թարգմանող լեզվի միավորների ներքին ձևի տեսանելի կապը արդեն չի ընկալվում» [5, էջ 54]:

Հ. Թումանյանի հեքիաթներում հանդիպում են հուզարտահայտչական տարբեր երանգներով օժտված մի շարք կոչական բառեր՝ արտահայտված ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերով: Հաշվի առնելով, որ ազգակցական միանման կամ գրեթե նման հարաբերությունները հատուկ են բոլոր ժողովուրդներին, Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը ազգակցական բառերը դասում են տերմինների շարքում [4, էջ 32]: Թեև ազգակցական բառերը, ինչպես և տերմինները, բավականին ճշգրտորեն անվանում են ազգակցական հարաբերությունները, այնուամենայնիվ, մի շարք ազգակցական բառեր ունեն «ազգամշակութային» ենթատեքստ, որը երբեմն անհնար է հաղորդել թարգմանության մեջ: Այսպես, օրինակ, բացի դիմողական (կոչական) արժեքով գործածվող *mamá/papá, madre/padre* բառերից, իսպաներենում կան հուզարտահայտչական տարբեր երանգներով օժտված կոչական մի շարք բառեր (*mami/papi, viejo/vieja; gordi; papito/mamita; papaíto/mamaíta; papuchi/mamuchi; padrecito/madrecita* և այլն), որոնք դժվար է թարգմանել այլ լեզուներում [6, էջ 65]: Նշված տարբերակներից որևէ մեկի ընտրությունը մեծ չափով պայմանավորված է նաև տարածքային գործոնով և հասցեագրողի սոցիալական կարգավիճակով: Հ. Թումանյանի հեքիաթներում հանդիպում են մի շարք կոչական բառեր, որոնք օգտագործվում են գրույցի ընթացքում մտերմաբար խոսակցին դիմելու, նրա ուշադրությունը հրավիրելու նպատակով: Այդ բառերի շարքում առանձնանում է բարբառային խոսակցամտերմական *ախսյեր* բառն իր տարբերակներով՝ *ախսյերացու* (անծանոթին դիմելու քաղաքավարական արտահայտություն), *մարդ-ախսյեր*: Իսպաներենում այն կարելի է թարգմանել *hombre* եղանակավորող բառով, ինչպես նաև *buen hombre* ժողովրդախոսակցական արտահայտությամբ, որը նույնպես օգտագործվում է անծանոթ խոսակցին դիմելու համար և շատ գործածական է իսպանական ոսկեդարյան գրականության մեջ: Յուրահատուկ *մարդ-ախսյեր* արտահայտություն-պատկերը կարելի է բառացի վերարտադրել իսպաներենում՝ հաշվի առնելով գրական որոշ ավանդույթների գոյությունը (Ֆերնանդո Սոտո Ապարիսիոյի համանուն վեպը և այլն): Երեք դեպքում էլ իտալերենում թարգմանիչը գործածել է ավելի չեզոք *fratello, amico* բառերը.

—**Ա՛խսյեր, ա՛խսյեր**, հալա մի կանգնի [էջ 218]: (Բարեկենդանը)

—**Hombre, hombre**, párate por un ratito [p. 3].

“**Fratello! Fratello!** Fermati un attimo” [p. 41].

— Առաջ բարի, **մարդ-ախսյեր**, ո՛ր ես գնում, — հարցրեց գայլը [էջ 167]: (Անխելք մարդը)

— Buenos días, **hermano hombre**, ¿adónde vas?

“**Buon cammino, amico!** Dove vai?”, chiese il lupo [p. 93].

— Բարի օր, **ախսյերացու**, էդ ի՞նչ ես մոլորվել, ի՞նչ ես միտք անում ... [էջ 187]: (Խոսող ձուկը)

—Buenos días, **buen hombre**, ¿por qué vienes tan despistado?

“Buongiorno **amico!** Perché sei così turbato, cosa ti preoccupa?” [p. 15]

Ամեն մի ժողովրդի հեքիաթներն ունեն հատուկ սկիզբ և վերջաբան: Հայկական հեքիաթները սովորաբար սկսվում են հետևյալ բանաձևերով՝ *Լինում է, չի լինում...* կամ էլ՝ *Ժամանակով մի ...*, իսկ իսպանական հեքիաթներին հիմնականում բնորոշ է այս սկիզբը. *Éranse una vez ...*, *Había una vez ...*, *Este era ...*, *Estos eran*.

Շատ հեքիաթներ ունեն նախասվածք կամ վերջասվածք, այսինքն՝ հեքիաթին նախորդող կամ հաջորդող սրախոսություն կամ իմաստախոսություն, որը հեքիաթի կոմպոզիցիայի կարևոր տարրերից է: Հետևյալ նախապատումը, որով հեքիաթասացը սկսում է «Տերն ու ծառան» հեքիաթը և՛ իսպաներենում, և՛ իտալերենում թարգմանվել է համարժեք նույնատիպ արտահայտություններով՝ ներդաշնակորեն միահյուսվելով հեքիաթի տեքստին. Աստված բարի տա ձեզ էլ, երկու ախպորն էլ [էջ 197]; *խոս.* —*Que Dios os bendiga, a los dos hermanos también* [p. 32]; *իտ.* *Che Dio benedica voi e due fratelli* [p. 74]. Բայց ահա «Ոսկու կարասը» հեքիաթի փակող բանաձևը

բառացիորեն վերարտադրելիս այն կտրուկ առանձնանում է ամբողջ տեքստից, հետևաբար և մասնակի վերափոխման անհրաժեշտություն է առաջանում: Տվյալ դեպքում կարելի է օգտագործել նաև իսպանական ժողովրդական հեքիաթների փակող բանաձևերի այնպիսի տարրեր, որոնք հատուկ են տվյալ իրադրությանը. Բարին էստեղ, չարը էն ագահ թագավորի մոտ [էջ 196]; *խոս.* *Y desde entonces ellos viven muy felices y dichosos. ¡Que Dios los bendiga y la maldad se quede con el rey avaro!*

Այսպիսով, հեքիաթը մի շարք կառուցվածքային, ոճապատկերային և գեղարվեստական առանձնահատկություններով օժտված ուրույն տեքստ է, որն առանձնանում է լեզվամշակութային մեծ ներուժով: Հեքիաթի ազգամշակութային նշույթավորվածություն ունեցող լեզվական միավորների թարգմանության ժամանակ կարևորվում է գործաբանական հարմարեցման խնդիրը, որը պայմանավորված է լեզվական և արտալեզվական տարբեր գործոններով, թարգմանող և թարգմանվող լեզուները կրող ժողովուրդների աշխարհընկալման և աշխարհաճանաչողության առանձնահատկություններով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976:
2. Թումանյան Հ. Երկերի լիակատար ժողովածու, հ.5, Երևան, «Գիտություն» հրատ., 1994:
3. Հարությունյան Ս. Հայ հին վիպաշխարհը, Երևան, «Արևիկ» հրատ., 1984:
4. Влахов С., Флорин С. Непереводимое в переводе. М.: Высшая школа, 1980.
5. Ретскер Я. Теория перевода и переводческая практика. М.: Международные отношения, 1974.
6. Фирсова Н. Испанский речевой этикет. М.: Высшая школа, 1991.
7. Tumanian, H. El carnaval (traducción del armenio: H. Baghdasaryan y A. Deirmendjian). Ereván, 2008.
8. Tumanian, H. Cuentos armenios (traducción del armenio: H. Baghdasaryan y A. Deirmendjian) // *Astghik*, Yerevan: Sahak Partev, 2010-2011, 20-21, pp. 26-38.
9. Toumanyán, H. Fiabe armene (traduzione dall'armeno di Geghard Vahè Vahuni). Erevan, 2013.

#### REFERENCES

1. Aghayan, E. Modern Armenian Explanatory Dictionary. Yerevan: «Hayastan», 1976.
2. Tumanyan, H. Complete Collected Works, vol. 5. Yerevan: «Gitutyun», 1994.
3. Harutyunyan, S. Old Armenian Epic Heritage. Yerevan: «Arevik», 1984.
4. Vlahov, S., Florin, S. Untranslatable in translation. M.: Vysshaya shkola, 1980.
5. Retsker, Y. The theory of translation and translation practice. M.: Mezhdunarodnye otnosheniya, 1974.
6. Firsova, N. Spanish discursive etiquette. M.: Vysshaya shkola, 1991.

#### Some problems in the translation of national peculiarities of fairy tales

**A. G. Baghdasaryan**

**Abstract:** The fairy tale is a unique form of the worldview modeling of a given nation, during its translation special importance is given to the equivalence of linguo-cultural elements. The present paper examines the translation problems of stylistic-figurative system, traditional formulas and of some cultural terms, based on the material of Spanish and Italian translations of the fairy tales of the great Armenian writer H. Tumanyan. During the translation of national peculiarities of the fairy tale special attention is given to the pragmatic adaptation of the text which is conditioned by the communicative-functional value of the utterances, linguistic and extralinguistic factors and by peculiarities of the mentality of target-language and source-language native speakers.

**Keywords:** *fairy tale, national cultural component, translation, pragmatic adaptation, linguistic and extralinguistic factors*

#### О некоторых проблемах перевода национальных особенностей сказок

**А. Г. Багдасарян**

**Аннотация.** Сказка является уникальной формой моделирования мировоззрения данного народа, при переводе которой весьма значимы проблемы эквивалентности лингвокультурных элементов. В статье изучаются трудности перевода образно-стилистической системы, традиционных формул и некоторых реалий сказок на материале испанского и итальянского переводов сказок великого армянского писателя О. Туманяна. В процессе перевода национальных особенностей сказки приставляется особенно важным прагматическая адаптация текста, что обусловлено коммуникативно-функциональным значением данного высказывания, лингвистическими и экстралингвистическими факторами, а также особенностями менталитета носителей исходного и переводящего языков.

**Ключевые слова:** *сказка, национально-культурный компонент, перевод, прагматическая адаптация, лингвистические и экстралингвистические факторы*